ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЪ
ENVIRONMENTAL PROTECTION AND MINING
INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№_____

«_____» _____ 2020թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ Շ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունվարի 8-ի թիվ հ.91915 գրությամբ բարձրացված հարցերի հայտնում եմ.

1. Ընկերությունում, որին պատկանում է վերոնշյալ գրությամբ նշված Արարատի ցիանային պոչամբարը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կողմից ներկայումս իրականացվում է ստուգում: Ձեր գրության 1-ին հարցին Տեսչական մարմի աշխատակիցներն անդրադարձ կկատարեն ստուգման ընթացքում՝ իրենց լիազորությունների շրջանակներում:
2. Պոչամբարից ստորգետնյա հոսքերում ծանր մետաղների չափաքանակների ուսումնասիրության նպատակով 2019 թվականին Տեսչական մարմնի կողմից իրականացվել են նստվածքաջրերի նմուշառման և լաբորատոր հետազոտման աշխատանքներ, ինչի արդյունքում ծանր մետաղների խտությունների գերազանցումներ չեն հայտնաբերվել:
3. Պոչամբարին հարակից հողերում, լճերում և նրանցում առկա ձկնեղենի մեջ ծանր մետաղների առկայության վերաբերյալ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ չեն իրականացվել:
4. 2020 թվականի ապրիլ ամսին «Հայկական բնապահպանական ճակատ» նախաձեռնության ահազանգի կապակցությամբ, Արարատի պոչամբարի

Կորյունի փող. 15, 0009 Երևան, ՀՀ
15 Koryun Str., 0009 Yerevan, RA

Էլ.փոստ՝ gnel.hasratyan@ecoinspect.gov.am
Web page: www.ecoinspect.am

տարածքում կատարված ուսումնասիրության արդյունքում՝ թռչունների անկման և ընկերության աշխատակիցների կողմից վերջիններիս թաղման վերաբերյալ տեղեկատվությունը չի հաստատվել:

Recoverable Signature

X

ԳՆԵԼ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: HASRATYAN GNEL 1809820138

Գ. Հասրաթյան

Կատարող՝ Ընդերքչի վերահսկողության վարչություն